վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊԸ-ի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Պատասխանողին մատակարարված ապրանքների դիմաց 7 559 997.00 ՀՀ դրամը Հայցվորին վճարելուն պարտավորեցնելու, Պատվիրատուի կողմից N-ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/214-3 պայմանագրի միակողմանի լուծումը անվավեր ճանաչելու պահանջներ ի մասին հայցը բավարարել.

2. ***Երևանի քաղաքապետարանին պարտավորեցնել «ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊԸ-ին վճարել մատակարարված ապրանքների դիմաց 7 559 997.00 ՀՀ դրամ գումարը,***

3. անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/214-3 պայմանագրի միակողմանի լուծումը*:*

4. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «ՏԵՔՍՏԻԼ ՓԻՓ» ՍՊԸ-ի բռնագանձել 130 000.00 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

5. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 27.03.2026 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի փաստացի կատարումը:

7. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր

կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին։

8. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

9. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում։

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE87-04C4-4F5C-8D3C հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am